


ՏՆՕՐԷՆ-ԽՍՐԱԳԻՐ  
Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՐ ԵՒ Է ԳՊՈՒԹԻՒՆ  
ՊԵՏԷ Է ՈՒՂՂԵՒ ԱՌ  
Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ  
ԳԱՀԻՐԷ (Հասպոսեթի)

Rédaction du journal arménien  
**ARCHALOUICE**  
HABIBIAN LE CAIRE (ÉGYPTE)



ԼՐԱԳՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ  
Տարեկան, ողջ դահկն. 60  
Վեցամսեայ » 35  
ՕՏԱՐ ԵՐԿՈՒՆԵՐ  
Տարեկան Ֆրանկ 20  
Վեցամսեայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆԽԿ Է  
ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ  
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղում  
գրութիւն և չ'են տրուիր:

ՄԱՏԹԵՈՍ ՄԱՍՈՒՐԵԱՆ  
ԵՒ ԻՐ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ

Ձմիւռնիոյ հայտնիւնը վաղը կիրակի 17/29 հոկտեմբեր, սրտի զեղումով պիտի կատարէ ազգային գրականութեան և կըրթութեան քաջամարտիկ հերոսին և բազմաբեղուն մշակին, Մատթէոս էֆէնտի Մամուրեանի Յիւնամեայ գրական գործունէութեան Յորէլեանի հանդէսն:

1830ին Ձմիւռնիոյ մէջ ծնած այսօրուան մեծ գրագէտը, կեանքի ամենազգուարին պայքարը մղելու համար ամբողջ կէս դար միշտ յաղթական մարտերէ յետոյ ալեւորած և տկարացած, բժիշկներու խորհրդով իր ամենէն շատ սիրած զբաղումէն ահամայկը հրաժարի և իր գրելը վար կը դնէ այսօր և հարկ է որ արժանաւորապէս վայելէ բարոյական արգասիքը իւր քրոնաթոր և արդիւնաշատ աշխատութեանց:

Հետամուտ պէտք է ըլլանք թէ հայտնիւնը պիտի կարենա՞յ ընել արժանի վարձատրութիւնը ալեւոր հանճարին հանգստանալու օրերուն մէջ, աիպար վարձապետի, հանճարն զ գրագէտի, պերճմասա խմբագրի, քաջահմուտ թարգմանչի և գեռ ի՞նչ օրինակելի ու գեղեցիկ յատկութիւններով օժտուած և զանոնք անխնայ յօգուտ իրեն ներուն ի կիր արկանելով խոնջած ու ալեւորած պաշտելի կեանքի մը համար:

Մատթէոս էֆէնտի Մամուրեան իբրև սիպար վարձապետ, իրեն պաշտօնավարութեան աստեղ իրարու յաջորդող շատ մը տարիներու ընթացքին մէջ, դարձած ու կերտած է շատերու անմշակ գաղափարներն ու զգացումներ: Տարտամ ու միջին հոգիներ, որոց մտքին առջև աշխարհը աղլամիլային քառս մ'էր, անոր ձեռքին մէջ ու հայրական խնամոց տակ լուսազարդուած և գեղափայլ դուրս եկած են կեանքի շրջանին մէջ սաւառներու համար:

Այդ անխոնջ մշակը — վարձապետը — ասին օր ծագած հոգւոյ աղամանդին վրայ, տաղտկալի ու աստանելի աշխատութիւններով զտած է զայն ա՛յն աղտերէն, ա՛յն կոշտ կեղևներէն որոցմով պատած էր նա, ու յետոյ յղկած ողորկած է, որպէս զի իւր ամէն կողմերով ճառագայթարձակ փայլի ճշմարտութեան լոյսին հանդէս:

Վարձապետական այս վեհ գործին տրիտուրը որակելու համար, հայ անուանի գրագէտներէն Ռ. Յ. Պէրպէրեան իւր գըրուածոց միոյն մէջ այսպէս կ'ըսէ. « ո՛հ, « խոնարհ է այդ էակ, իւր կեանք գրելի « խեղճ է միշտ, իրեն համար չեն փայլեր « սակին ու արժաթը. և կառքերն չեն թա- « ւալիր իրեն համար: Չորաբեկ հաց մ'է « յաճախ իւր տրիտուրն, բայց իր խոնար- « հութեան մէջ մե՛ծ է այդ էակ, նա մար- « տիրոս մ'է յառաջդիմութեան, անոր ա- « ընան դնով կը քալէ մարդկութիւնը, « ածուին է որ կայրի քաղաքակրթութեան « մեքենան դարձնող շոգին արտադրելու « համար »:

Մեր ալեզարդ Յորէլեարը — Մատթէոս էֆէնտի Մամուրեան — այս ասպարէզին բոլոր գառնութիւնները ճաշկած է անտարակոյս՝ անսայթաք յառաջանալով իր ընտրած նուիրական ուղիին մէջ, առանց յուսահատութեան նշոյն անգամ ցոյց տալու:

— Իր խոնարհութեան և անձնուիրու- թեան մէջ Մե՛ծ է այդ էակ:

Մատթէոս էֆէնտի Մամուրեան իբրև հանճարեղ գրագէտ և քաջահմուտ թարգմանիչ, յօրինած է երկասիրութիւններ և բազմաթիւ թարգմանութիւններ. իր երկերուն մէջ սրամիտ հեղինակը անբողբոստելի և բազմակողմանի կարողութիւններու ի մի հաւաքուած ըլլալը ի ցոյց կը դնէ. հոն կարելի է գտնել գեղեցիկն ճաշակը, բանաստեղծի, պատմագէտի, լեզուագէտի և իմաստասէրի անխոնջ աշխատութեան բիւրերանդ և հիանալի արդիւնքը, ազգասէրի վառվռուն երեակայութիւնները, ապագայի յառաջդիմական ծրարքներու և գործնականի վերածելի ընտիր սկզբունքներու և հրահանգներու հաւաքածոն:

Ով որ ալ կարգացած է Հայր մը անկասազիրը, Հայրական Նախակրթիկ և Հն. զարգացած ըլլայ այն կամ մտքի չափաւոր մշակութիւն մը ստացած, հիացումով հաստատած է այս անքօղարկելի ճշմարտութիւնը:

Եւ կը կարծէ՞ք թէ Մամուրեան այս գրական գոհարները մեր ազգին ընծայելու պահուն, անթուելի զրկանքներու և դժուարութեանց առջև չէ գտնուած և այս ամեն հոգեկան տագնապներու առջև խիստ հատիլը չէ դիտցած:

— Իր յօգնական աշխատութեանց մէջ թաղուած շատ հմուտից ու Մե՛ծ է այդ էակ:

Մատթէոս էֆէնտի Մամուրեան իբրև խմբագիր-հրատարակագիր, քառօրը դարէ աւելի իր այդ ասպարէզին ներկայացուցած բոլոր խոնջութներուն դէ՛մ ալ անյողդողդ քայլերով և անընդհատ յաղթանակի մարտը մղելէ յետոյ, Ա. Մամուրեան ներկայ տարուոյս 17րդ թուոյն մէջ անոր դժուարութեանց թուիքը կ'ընէ այսպէս:

« Ա. Մամուրեան գրեթէ երկսնամեայ փոր- « ձով գիտէ թէ քանի տաժանելի է մեր ազգին մէջ խմբագրական պաշտօնն և ինչ « նիւթական դժուարութեանց կը հանդիպի, « դժուարութիւններ՝ որ միայն զոհողու- « թեամբ կրնայ հարթուիլ, առանց չափաւոր « շահու թոյլ ակնկալութեան, և կարելի է « ըսել որ Ա. Մամուրեան անգամ վրայ « ապրով և հազիւ ծայրը ծայրին բերելով « յաջողած է ցարդ ապրիլ, թէև կը խոս- « տովանի թէ կեանքը երբեք անփայլ, « ստէպ տխուր և վհատեցուցիչ եղած է, « այլ աննկուն յարատեւած: Հեռապէս « կերեակայինք մեր ազնիւ պաշտօնակից- « ներու վիճակն, որոնք ունենալով հան- « դերձ աշխատելու յօժարամտութիւն, լու- « սաւորելու տենչ, ազգին օղտակար լինելու « գովելի փառասիրութիւն, չեն գտներ « համապատասխան խրատոյս և նիւթական « փոխարինութիւն ժողովուրդին կողմէ: Եւ « յիշուի ամեն թէ այն հասարակութեան « որ իր մտաւոր գործիչներու օժանդակ « չ'գտնուիր չէ թէ յանուն որդիներու « քեան, այլ աստիճան յառաջդիմութեան »:

Մատթէոս էֆէնտի Մամուրեան ընդ- հանուր հայութեան ազգային գրականու- թեանը մէջ ալեւոր կէս դարու փորձանաւոր և կնճռալից շրջան մը բոլորած և այսօր եօթանասուն ձմեռներու բեռան տակ կը բա- թու ալեւորած է, ուրեմն առանց դեգեներ- կրնանք ըսել:

— Հայ գրականութեան հորիզոնին ամենափայլուն աստղը, գերակշիռ և պատ- կառելի Վարպէ՛տն է այդ էակ:

Թէ Կ. Պօլոյ և թէ արտասահմանեան բոլոր հայ թերթերը իրենց սլոնակներուն մէջ իրաւամբ շատագովեցին Յորէլեար Մե՛ծ Գրագէտին և բազմաշխատ Մշակին բարձր արժանիքն և անոր բարեկամներն ու հա- մակրողներ վաղուան համար կազմակեր-

պուած Յարեւանի առթիւ փութացին զրկել իրենց նուէրներն:

Գահիրէն ալ մասնակցելու համար 6—7 հոգիէ բազմացեալ Մասնախումբ մը կազմեց՝ որոնց գործունէութենէն տեղեկութիւն մը չ'որուեցաւ Արշաղոյսի կերէի թէ հակառակութեան զգացումներէ ու նախանձէ թեւադուած մասնախումբի անդամները, Մատթէոս Էֆէնտի Մամուրեանի նման մեծ անձնաւորութեան մը Յորեւանին ո՛ր է է միջոցաւ մասնակցելու համար, Արշաղոյսի ունեցած իրաւունքներն ալ իրենց կրքերուն զոհել գիտցան. և զլացան յայտարարութեան օրինակ մը զրկելու անոր: Բայց Արշաղոյսի խմբագրութիւնը և անոր աշխատակիցները իրենցմէ շատ աւելի յարգող են պատկառելի Յորեւանը, և գոնէ այս քանի մը անբաւարար տողերով կը մասնակցին ընդհանուր շարժման և ուրախութեան. ու անկեղծ զգացումներով կը խոնարհին Մեծ և բազմազգիւն Գրագէտին ու աւերած անխոնջ Մշակին սուղէ:

Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

(Շար. ճախորդ քիւնց եւ վերջ):

Այս գեղեցիկ ու գերազանցօրէն օգտակար ձեռնարկը նկարագրելով՝ անշուշտ չենք կրնար նոյնին իրականացումը պահանջել նաեւ մեր մէջ, ուր զգործարար չկայ ըսելու չափ հազուագիւտ են վրօմանի պէս գաղափարական հարուստները: Մեր նպատակն է լոկ ներկայացնել զգալիոր, որուն պէտքը ա՛յնքան զգալի է մեր մէջ եւ փոքր սահմանի մը մէջ գործադրութեան համար ալ միջոցներ չեն պակասի: Սկսած 95 — 96 կարմիր թուականներէն՝ երբ ամէն կողմէ ստուար գաղթականութիւն մը ապաստան գտաւ արտասահմանի ազատ երկիրներուն մէջ՝ մինչեւ ներկայում, եթէ ակնարկ մը նետենք հայրենիքէն սարսափով ու յոյսերով անշատուած այս գաղութներուն նիւթական ու բարոյական կեանքին վրայ, գահավէժ անկում մը միայն կը նկատենք: Մինչդեռ ազատութիւնը, զոր կը վայելին անոնք հիւրաբար՝ պէտք էր աւելի բարձրացնէր անոնց բարոյական ու մտաւոր մակարդակը: Տարիներ առաջ տաճկական բռնակալութեան պրկումներուն մէջ՝ գէթ փոքրիկ ազատութեան մը ծարաւով կը մրկէինք, մեր եւանդուն ծրագիրները իրականացնելու: Սակայն արտասահմանի ազատութեան մէջ մեր ամօթալի անտարբերութիւնը ապացուց, որ շուտ կը մոնանք ամէն եւանդ ու խանդ երբ մեր կաշիներուն վրայ բռնակալի խարագանին հարուածները չըզգանք: Այն ատեն մեր հանրային գործունէութեան ամէն ասպարէզները շատ աւելի բարեկարգ վիճակ մը ունէին, ու մենք, մեր գէժ յարուցում ճիւղաղային արգելքներուն հակառակ՝ չէինք վարանէր օգտակար նորութիւններն իսկ իւրացնելու: Ո՞վ չընէր ժամանակին Պոլիս այն ետանդուն երիտասարդութիւնը, որ կրեալի օրեր, փոխանակ զուարճութեան և զբօսանքի՝ գաւառացի բեռնակիրներուն ու բանտրներուն դասախօսութեամբ կըզբաղէր. և լսարաններն ու ընկերութիւնները, որոնք գաւառներու խորքը կազմուած՝ լոյս կը տարածէին ժողովրդական խաւերուն մէջ: Իսկ ի՞նչ ըրինք արտասահմանի մէջ, ուր տիրող կառավարութիւնները փոխանակ այդ կարգի ջանքերը խափանելու՝ աւելի կը խրախուսեն զանոնք: Թողնելով միւսները անհնար միայն Եգիպտոսի գաղթականութիւնը, որոնք այս քանի մը տարուան պատմութիւնը ուրիշ բան չպարունակեր, բայց եթէ սրտաբեկ թշուառութիւն մը՝ թէ նիւթապէս և թէ բարոյապէս: Հազարաւոր աշխատաւոր երիտասարդներ, որոնց մեծ մասը առողջ ու մաքուր ելաւ հայրենիքէն, հոս անգոր-

ծութեան ու տիրող միջավայրի ազդեցութեան տակ՝ տեսակ տեսակ մոլութիւններու տիրմին մէջ խրեցաւ: Ի՞նչ եղան անոնց նիւթական նպատակահարցերը: Բայց չգտնուեցան երբէր բարոյապէս հոգացողներ: Կրթութեամբ երիտասարդները, որոնցմէ բաւական թիւ մը կա, գաղթականութեան ծոցին մէջ՝ մի միայն սրճարաններու հաճոյքին իրենց հազուադէպ ու պշտանքին հետամուտ եղան. ու տարակոյս չկայ որ անոնց վրայ կը ծանրանայ չարիքներու ամենամեծ՝ ստատարանտուութիւնը: Այս ազատ երկրին մէջ գաղափարային գործունէութեան ամենափոքր հետք մը իսկ չ'ըզգցնէ անոնք: Բայց քանի մը թերթերէ, որոնք միջավայրին պէս անգոյն ու անկենդան ընդհանուր անտարբերութեան մէջ թողնուցան:

Աշխատաւոր, համեստ դատակարգէն ելան դարձեալ՝ այն երիտասարդները, որոնք այս տարուան վերջին կիսամեակին մէջ քանի մը միջիթաւական ձեռնարկութիւններու նախաձեռնութիւնը ունեցան: Գահիրէի մէջ կազմուած լսարանական եւ ընթերցարանական ընկերութիւնները(1) Աղէքսանդրիայի ժողովրդական գրագրարան-ընթերցարանը գովելի նախափորձեր են, որոնք յարատուութեամբ՝ երիտասարդութեան առողջ մասը իրենց շուրջ հաւաքելով՝ կրնան ժողովրդական կրթութեան գործը վարել: Գաղթականները, որոնք օտարութեան մէջ բան մը չ'ըզգացնէ զատ՝ ամէն տեսակ զրկանքներու կը մատնուին՝ պէտք է գէթ բարոյապէս քիչ մը օգտուին. եթէ ոչ զբաւ՝ գէթ քիչ մը մտաւոր պաշար տանին իրենց հետ հայրենիք, որպէս զի գաղթականութեան ահազին շեշտները գէթ չափով մը հակակշռած ըլլան: Ու այս նպատակին համար անյողողող ջանքերը, որչափ ալ համեստ միջոցներով սկսին՝ ապագային կրնան մեծ յաջողութիւն գտնել:

Այսպիսի համեստ՝ բայց յարատու աշխատութեան մէջ արդիւնքն է ժողովրդական համալսարանը, որ այս օրեր Փարիզի մէջ բացուցաւ:

Հազիւ տարի մը առաջ Փարիզի գործաւոր մը, որ երկար ժամանակէ ՚ի վեր իր առօրեայ աշխատութիւններէն աւելցած պարտաւոր ժամերը նուիրած էր ընկերական գիտութիւններու ուսման՝ ծրագրեր կը յղանար ժողովրդային թաղի մը մէջ տեսակ մը քլուպ հիմնելու, որ ամէն իրիկուն աշխատաւորներուն օգտակար գուարճութիւններ, խօսակցութիւններ և ընթերցանութեան նիւթ ընձեռնելով՝ փրկարար մրցում մը պիտի ընէր գիտնականներուն և սրճարաններուն հետ: Այս ծրագիրը յաջողցնելու համար ո՛չ յարատուութիւններ ունէր, ո՛չ զբաւ, ո՛չ կոնակ, ոչ ալ ինչ բայց եթէ յամառ յարատուութիւն մը և անհուն կամեցողութիւն մը: «Գաղափարներու գործակցութիւն» անունով թերթ մը, զոր ինք խմբագրեց ու տպագրեց, իր պրոպագանդային միակ միջոցն էր և քանի մը ուրիշ գործաւորներ միաբանեց իր գաղափարին: Ասոնց օգնութեամբ գրեթէ չնչին զբաւաղութիւնով մը, առաջին հաւաքատեղի մը հիմնեցին տան մը մէջ. անդամները սկսան խօսելու, այնպէս որ յիշ ետքը տունը նեղ կուգար. հարկ եղաւ աւելի ընդարձակ տեղ մը ճարել: Այն ատեն հիմնադրող խորհեցաւ զայն աւելի բարձր հիմնարկութեան մը վերածել, ազատ և ժողովրդական տեսակ մը համալսարան, գիտութիւնը հանրացնելու և միանգամայն ժողովրդական կրթութեան գործը շարունակելու: Կարճ միջոցի մը մէջ 15,000 ֆր. հաւաքուած էր ու այդ զբաւով հիմնուեցաւ «Ժողովրդական Համալսարանը», որ այժմ կը

(1) Լսարան-Ընթերցարանու Ընկերութիւնը մէկ հատ է միայն, որոյ կազմութեան սկզբնաւորութենէն ց'այսօր նշանակելի քայլ մը առած չէ գէպ առաջ, Երբեմն կ'ըսուէր թէ Գործադիր Ժողով մէջ եւ եղայ զուց եղաւ վէճը կայ: Վերջերս տեղի ունեցած Ընդհ. ժողովոյ գումարումին մէջ ընդհանուր և ներքին կանոնադրներու վաւերացումը եղած է և հրաժարուալ մէկ քանի ա՛գամներուն տեղ նորիւր ընտրուած: Այս մէկ երկու օրերուն մէջ ալ կը լսենք թէ եւ եղայ ի հարցն ալ իր վեր նական լուծումը ստացած է: Հիմակ մեզ կը մնայ մաղթել որ Լսարան-Ընթերցարանու Ընկերութիւնը հակառակ քայլ յատուցողիմէ և պահէ իրեն վրայ գրուած յոյսերը:

պարունակէ հինգ սրահներ. խաղի, ընթերցանութեան, գեղարուեստական ցուցադրութեանց, դասասուութեան (conference) և թատրոնի Շահական է հոս ՚ի մէջ բերիլ համալսարանին բացման օրը՝ հիմնադիր ընկերութեան կողմէ գործաւորներուն ցրուած յայտարարութեան օրինակը:

«Ձեզի պէս աշխատաւորներ ենք մենք ալ: Բայց կը հաւատնք թէ մարդկային կեանքը ունի աւելի մտերմական, աւելի տեսական, աւելի բարձր և նուազ ծախքով ուրախութիւններ քան զինտուները: Մենք կ'ուզենք իրական քաղաքակրթութիւն մը, որ իրմէ գուրս չ'լուտարէ մարդերու մեծամասնութիւնը. քաղաքակրթութիւն մը, որ ալ եւս լոկ մէկ քանիներու գործն ու շահը չ'լինի, որուն ամէնքը կանչուին օգնելու և մասնակցելու: Ընկերներ, փափաքելով մեր պարտաւոր ժամերը մեր ֆիզիքական, մշտաւոր և բարոյական զարգացումին՝ ինչ որ կը նշանակէ մեր ընկերային ազատագրութեան գործածել, մենք կը կանգնենք զինտուների և քաֆէ-շանթանի դիմաց մեր առաջին ժողովրդական համալսարանը»:

Ցիւրիխ, 15 հոկտ. 1899 ԱՌԱՆՁԱՐ

ԵՐԻՊՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

Բարիք 16 Հոկտ. 99

ԻՌԱՆՏԱՅԻՒԻ ԵՒ ՊՕԷՐՆԵՐՆ

Անգլիայից մեծ ժողովուրդ մ'են, որովհետեւ միշտ իրենք ըսած են այդ և ոչ ոք զնացեր է իրենց մտտ այդ բանը ճշմարտելու: Սակայն երբ գործերն մտնէն քննուին, կը տեսնուի որ Բրիտանական Կայսրութիւնն կը նմանի այսօր տան մը՝ որուն բնակիչներն կուսակցութեանց բաժնուած են:

Ամենէն գործնական անձինք կը բողոքեն պատերազմին դէմ, վասն զի անոր հետեանքն պիտի լինի հարկերու ծանրացումն մանաւանդ Իւլանտայի մէջ, ու արդէն տուրքերն անտանելի են: Եւ անգուն հայրենասէրներ կը բողոքեն Բրիտանական դահլիճին դէմ: Վասն զի նա Իւլանտային կարևորութիւն կուտայ միայն՝ երբ խնդիրն տրոյ վրայ է: Ասոր համար ամեն կողմերէ բողոքներ կը տեղան. շատ տեղեր միջինիներ կը կալին ի նպաստ Պօէրներու: Քաղաքապետական ժողովներու մէջ համալրութեան քուէն՝ կը արուին Պօէրներու. Երեսփոխաններ կը ձայնակցին անոնց. և այսօր Տուպլինի մէջ ամենայայտնի անձը՝ քաղաքապետ ճօհն Մաք Պրիտն է որ Իւլանտական ջոկատ մը կազմած է և արդէն ի պատիւ անոր երգեր կ'երգուին:

Միս Մօտ Կօնի նախագահութեան տակ Թրանսպարական միութիւն մը կազմուած է ի Տուպլին, որուն նպատակն է Իւլանտական ջոկատին գործունէութեան աջակցել Թրանսպարական մէջ: Այդ յանձնարարութիւնը դրօշակ մը զրկած է յ'Ափրիկէ, զի՛ տեսնուած են Տուպլինի սիկնայք:

Մի քանի երեսփոխաններ, ընդ որս Միչէլ Տալիթ, սարսափելի պայքար մը կը մղեն Պ. Չէմպլէյնի քաղաքականութեան դէմ, և այս ցոյցերն մեծ արձագանք կ'ըստանան Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ:

Այս շարժումներու ամենագործնական կողմն այն է՝ որ Իւլանտացի երիտասարդ-

ներուն զգրանք կ'ազդէ Անգղիական բա- նակին մէջ մտնելն. թէպէտ կառավարու- թիւնը զանազան նիւթական առաւելու- թիւններ կը խոտտանայ անոնց: Անգղիացիք ուզելով իրենց իրական ահարուածներ ծածկել, այդ մասին շատ քիչ կը խօսին, մի քանի թերթեր խորհուրդ կուտան կա- ռավարութեան հայրենասէր Իւլանտացի Երեսփոխաններն բանտարկել և զէն ի ձեռին ձերբակալուած Իւլանտացին կախել:

A. SAISSY

### ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

#### ԱՆԿԼՈՒԹՐԱՆՍՎԱԼԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Զօրավար Եուլ՝ Լէտիսիթի հիւսիսա- յին կողմէն միացած է զօրավար Հուայթի, որ Լէտիսիթի ճամբուն վրայ բոլոր ամուր դիրքերը գրաւած է. այնպէս որ այդ քա- զաքի մասին այժմ մտաւորանքներն մը չունի զօրավարը:

— Զօրավար Հուայթ ամսոյս 24 ին բաղխում մ'ունեցած է Պօէրներուն հետ: 11 անգղիացի սպաննուած են, որոնց մին գնդապետ մ'է և 96 հոգի ալ վիրաւորուած:

— Քէթ-Թաուէն ամսոյս 23ին հեռա- գրուած էր թէ Պօէրներու խիստ ստուար գունդ մը Քիմպըրլէյի վրայ կը յառաջանայ: Քաղաքը եթէ այս վայրկեան իսկ տակա- լին Պօէրներուն ձեռքը չէ անցած, պէտք է որ շատ գէշ կացութեան մէջ գտնուի՝ ջուրէ և ամէն հազորդակցութենէ զրկուած ըլլալով: Մինչդեռ Մ. Սիսիլ Ռոտս քանի մը օր առաջ ստիպողաբար օգնութիւն կու- ղէր անգղիական իշխանութիւններէն. ահա կը տեղեկանանք թէ փոխանակ անգղիական զօրքերուն՝ Պօէրներն են որ մեծ բազմու- թեամբ կը մտնեն Գիմպըրլէյի:

— Թէեւ ամսոյս 23ին եկած հեռագիր մը կըսէր թէ զօրավար Սիմոնի վէրքին մէջէն յաջողած են գնդակը գուրս հանել և ինքը լաւ վիճակի մէջ կը գտնուի, սա- կայն առջի օրուան հեռագիր մը կ'իմացնէր թէ զօրավարը մեռեր է:

— Անգղիոյ պատերազմական նախա- ըրարութիւնը անպաշտօն կերպով կը տեղե- կանայ թէ անգղիացի հինգ տեղակալ, մէկ գնդապետ, համարակալ պաշտօնեայ մը և հարիւրապետ մը Պօէրներէն պաշարուելով գերի բռնուած են ամբողջ գումարտակի մը հետ, երբ Կլէնքօի պատերազմին առեն Պօէրներուն ետեւէն ինկած կը հալածէին:

— Խուճը մը պատերազմական գերի- ներ փոխադրող շոգեկառք մը ամսոյս 26ին Բրէթօրիա հասած է: Արդ զերիները, որոնց մէջ կը գտնուէին 9 սպաներ, խուճը բազ- մութեան մը կողմանէ ընդունուած են հան- դիսաւոր լուծեամբ մը:

— Սըր ճ. Հուայթ 26 թուականով հեռագրած է. « զօրավար Եուլ այսօր Լէ- տիսիթի հասաւ հեղեղանման անձրևի մը տակ գիշերային սաժանելի գնացքէ մը յետոյ: Զօրքերը ստիպել կերպով յոգնած են, բայց իրենց բարոյական կորովը տեղն է և քիչ մը հանգստի պէտք ունին միայն »:

— Ռիտրերի վերջին մէկ հեռագիրը կըսէ թէ Կլէնքօի պատերազմին մէջ Պօէր- ներուն 3 թնթանթները գրաւուած չեն, եւ թէ Խրանսվալի զօրքերը աննշան կու- ռուսաներ Պլանեյած են. վասն զի իրենց թողած գիրքին վրայ քանի մը մեռեալ եւ վիրաւորներ միայն գտնուեր են: Գալով այն անգղ. գումարտակին շոր փախտա- կաններուն ետեւէն ինկած էր, այնպիսի թափով ու եռանդով թշնամին հալածեր է որ ինքզինքը . . . Բրէթօրիա գաեր է 9 սպաներով:

### ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս չորեքշաբթի օրուան թուով ծանուցած էինք, Գաւառ. Վարչութեան Պատկ. Երեսփոխանական Ժողովը նիստ ու- նեցած է, Ատենապետութեամբ Վսեմ. Տիգ- րան փաշայի:

Օրակարգի ամենէն առաջին խնդիրն եղած է « չլիշուի » ի հարցը, որոյ մասին Պատ. Ժողովը վերջնապէս որոշած է շա- ռունակել Պատրիարքի անուան յիշատա- կութիւնը:

Երեսփ. Ժողովոյ այս գումարման մասին Արաք. Մոզաքքաւի Դշ. օրուան թերթէն հետեւեալ տեղեկութիւնը կը քաղենք:

« Տեղոյս Հայոց Ազգ. Երեսփոխանա- կան Ժողովը երէկ (երեքշաբթի) ՚ի նիստ գումարուած է ատենապետութեամբ Վսեմ. Տիգրան փաշայի և այժմու Պատրիարքին ա- նունը յիշելու կամ չլիշելու մասին Ժողո- վըրեան մէջ ծագած վէճին կարգադրու- թեամբը զբաղած է: Արդ Ժողովը որոշեր է թէ պէտք է Պատրիարքին անունը յիշել պատարագի մէջ, և ընտ. ականջ չկախել անոնց որ Պատրիարքի անունը յիշատա- կութեան զազարումը կը պահանջեն:

« Զարմանալի է որ, կըսէ Մոզաքքաւ, Վսեմ. Տիգրան փաշա և իւր Ժողովական ընկերք իրենց Պատրիարքի մասին այդպիսի նախանձախնդրութիւն մը ցոյց կուտան, մինչդեռ Թաշլի թղթակիցը Պօլսէն կը զրէ թէ հայոց Պատրիարքը ինքը կը պնդէ հրաժարականին վրայ. վասն զի իւր Ժողո- վուրդը Սուլթանին հանած Իրատէի մասին ոչ համարում գոյացուցած է և ոչ ալ գոհ մնացած, հետեւաբար համամիտ չէ նորին Ամենապատուութեան ընթացքին, որով Մապէյնի խոստումներուն հաւատ կընծայէ »:

### Ա.Զ.Գ.

Ազգատախնամ Ընկերութեանս Գործ. Ժողովը ներկայիւս կուզայ ծանուցանել ընկերութեան յարգոյ բաժանորդներուն՝ որ ներկայ ամսոյս 26 հինգշաբթի օրէն սկըսեալ Պ. Խաչիկ Ալթունեան ընկերութեանս հաւա- քիչ կարգուած ըլլալով, նուէրներու եւ բաժ- նեգիրներու գանձումը ընել իրեն յանձնուած է:

Ուստի այս առթիւ կը խնդրուի յար- գոյ բաժանորդներէն, որպէս զի այսուհե- տեւ իրենց բաժանորդագրութիւնը անյա-

պաղ յիշեալ նոր ընտիր հաւաքչին վճա- րելու բարեհաճութիւնը ունենան. յօգուտ ընկերութեան պահպանման եւ յառաջա- յումին:

Ի գիմաց Աղբ. Ընկ. Գործ. Ժողովոյ, Ատենապետի, Ատենապետ Ե. ՔէրէՍթէճեԱն ՏՐ. Գ. Փ. ԷՎԼԵԱՆ

Տր. Ա. Ս. Յակոբեանի նախաձեռնու- թեամբ, ի նպատակ գաղթական ընտանիքի մը կազմակերպուած վիճակահանութեան տոմսերն սպառած լինելով, վաղը կ'իրակի 29 Հոկտեմբեր Բարեգործ. Ընկերութեան սրճարանին մէջ հրապարակու տեղի պիտի ունենայ յիշեալ վիճակահանութիւնը:

### ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

Բարեկի սովորութիւնք գանազան երկրաց մեզ.— Գերմանիոյ մեծ մասին մէջ կանանց ձեռքը համ- բուրել՝ յարգանաց նշան է: Իտալիոյ մէջ միայն ազգականաց յատուկ է: Ռուսիոյ մէջ ճակատ համբուրելու սովորութիւնը ընդհանրական է: Չի- նաստանի մէջ ձիով դացող մէկը եթէ իրմէ բարձրաստիճան անձի մը հանդիպի, իսկոյն ձիէն կ'իջնէ և բարեւի կը կենայ: Ընդհանրապէս մէջ իրմէ աստիճանաւոր մէկու մը հանդիպողը պարտաւոր է իսկոյն հանել կօշիկները, ալ ձեռքը ձախ թելին վրայ գնել և քանի մը անգամ խոնարհութիւն ընել: Սէյլանի մէջ բարեւի կանգնողը ինքզինքն գետնը պիտի նետէ և քանի մը անգամ պիտի արտասանէ զիմացինին անունը, աստիճանն ու պաշտօնն: Արիւրկէի մէջ ցեղ մը կայ որոյ անգամք եթէ իրար տեսնեն՝ իսկոյն մէկմէկու վրայ կը խոյանան կը ցատքեն և: Կլիսոն վրայէն անցնե- լու ատեն զէնք մ'ալ կը պարպեն եղեր:

Մալիկներուն մեզ եւս միտոյ կայ եղեր.— Միտոյի հետազօտութեամբ զբաղող գիտնական Կօլէնց սկսած է հոչակել թէ՛ յարուր ծաղիկները և վարդերուն մէկ մասը՝ ամբ միջնասակար միք- րոպներ կը պարունակեն իրենց մէջ և հետեւա- բար վտանգաւոր է գործածել զանոնք:

Սաղաթիկներուն ամենահինն է Տօպանը: Թրթուրը չափազանց շատակեր է: Մէկ ամ- սոյ մէջ կերածը՝ իւր ծանրութեան 6000 պատիկը կ'ըլլայ եղեր:

Անգղիոյ Թագուհոյն տանթէլաներուն հա- լաքածոյն 80 հազար լիբա կ'արժէ կ'ըսուի:

Դիակեր են թէ՛ մարդ մը տարւոյն 10 օրն հիւանդութեամբ կ'անցունէ:

Լոնտոնի բնակչաց 4ին 1ը օրը մէկ լիբայէն աւելի կը չափե եղեր:

Հաշուեր են թէ՛ Ամերիկայի մէջ ամեն տարի մէկ միլիոն լիբայի արժէքով բան կը զողցուի:

Անգղիոյ մէջ՝ 1871ին, ծխախոտի գործաւորաց 1000 ին 42ը, իսկ անցեալ տարի 100 ին 21 իզա- կան սեռէ էին:

Լոնտոնի մէջ՝ 130 հազարի չափ ուսուցչուհի կայ:

Հասարակ լօքօթիքի մը մեքենայն՝ 900 ձիու զօրութիւն ունի:

Բոլոր աշխարհի վրայ 11 միլիոն հրեայ կայ: Կայծակէ զարնուող մարդոց 3 ին 1ը կը բը- ժշկուի:

Պրագիւրեայէ 500 տեսակ օձ՝ Բարիկի առաջիկայ արուեստահանութեամբ պիտի զրկուի եղեր:

Մեծ անապատը՝ Միջերկրական ծովէն ետա- պատիկ ընդարձակ է:

Բովանդակ աշխարհի մէջ բազում զաւակ ու թոսն ունեցողներուն առաջինն է Ժանսոն անուն մէկը, որ ունի 19 զաւակ, 175 թոսն և 100 թո- ռանց թոսն:

Ս. Գ.

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԽՈՐ ԴԱՍԵՐ

ԶԱՓԱՅԱՍՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ Ի ՏԱՂՈՒՑԻՅԷ

Առաջիկայ նոյեմբեր ամսոյ 6էն սկսեալ երեկոյնները ժամը 7էն մինչև 9 1/2 պիտի աւանդուին Անդր. Գաղղ. Արարերէն և Հայերէն դասեր:

Գիմել աւ. Ս. Յ. ԳնԱՃԵԱՆ Հիմնադիր-Տնօրէն Հայ Աւետարանական վարժարանաց:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈ

Յոօգսի Պալ վանաւանսան մօտերը, Կառն-էլ-Պենարի ցիւց դիմացը

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս իրենց նոր բացած փութին մէջ, անխարդախ աւելիք կը պատրաստուի ԳԱՂԳԻՍԿԱՆ, ԱՆԳՂԻՍԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուրճի, թէյի և կաթի պարսիականներ, եւ այլն:

Եկաւօք և Ընկերութիւն մեծ ջանք և հոգածութիւն պիտի ունենան իրենց դիմող բոլոր յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու:

Յանձնարարութիւնը ամենայն ճշգրտեամբ և փութով կը կատարուին: 10 50

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐԶՊԱՆԵԱՆ

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՉ

Իւր գործատեղին հաստատած է Ապտինի պալատին ճիշդ շինման փողոցը, Շարա-էլ-Պալման թիւ 7 տան մէջ:

Ամենէն զժուարահաճներն անգամ գոհացնելու պայմանաւ կ'արդուէ շապիկներ և այն ամեն զգեստեղէններն, որոց համար արդուի պէտքը կ'զգայուի:

Ասանցմէ զատ ունի նաև լուսացարարութեան յատուկ ճիւղ մը, ուր իրեն դիմող յաճախորդներուն ճերմակեղէններն զատ զատ լուարու գովելի դրութիւնը հաստատած է:

Յաճախորդներուն դիւրութիւն ընծայելու նպատակաւ ճերմակեղէններն ինք անձամբ պիտի առնէ տուներէն և պիտի վերադարձունէ որոշեալ ժամանակին:

Գիները ՉԱՓԱՒՈՐ ԵՒ ԴԻՐԱՄԱՏՉԵԼԻ 5-8

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱԲԱՐՉ

Վկայեալ տեղական կառավարութեան և բժշկական վարժարանէն

Իւր բնակութիւնը հաստատած է ի Շարա Ապտիւ-Ապիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը և տեղական ֆլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն դիմողները կատարելապէս գոհ պիտի մնան: 13-24

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

ՎԱՅԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՅՕՆՕԿՐԱՍ

Գ.Ա.ՆԻՐԷ. - Մուսի փողոց, - Գ.Ա.ՆԻՐԷ Ս. ԵՒ Ս. Սեհալիի վանաւանսան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի և քծնօլի ընտիր տեսակէ բանախլիներու մեծ միջերք:

ԴԻՄԵՑԷՔ ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց և կանանց ժամացոյցներ, ազամանդազարդ, ոսկի, արծաթ և ցիֆէ:

Յրանաական և ամերիկեան ապրանքայ ամենաընտիր տեսակներէն զարդեղէններ, օղբաներ, օղեր, մասալիներ և այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱՒՈՐ

26-50

ՏՕՐՔՐՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՍԱՄՆԱԲՈՅԺ Ապսին, Շարե Գուպի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծակուանք:

Կը դադարեցնէ վայրկեանապէս ակուայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաններուն տոկունութիւնն աւ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ: 3 5-10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ

Տայիբէի Սանիյէի ցիւց դիմաց

Ամենաընտիր ապրանքներէ կը պատրաստէ խիստ կոկիկ, հաստատուն և ճաշակաւոր կոշիկներ, արանց, կանանց և տղայոց համար:

Գիները չափաւոր և աժան: Փորձ մը միայն կը բաւէ: 18-24

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ի Գ.Ա.ՆԻՐԷ

ՇԱՐԱ ՄՕՉԱՄԵՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ, պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և տեսակի յանձնարարութիւններ: Ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազղեր, Հրախրագրեր, Այցեխարտեր, Յանկեր, Գիտեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Բնկերորէանց և վաճառականներու տպագրական ամեն պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ կը ըզած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան, ճշգրտապահութեան և գներու չափաւորութեան մէջ:

Եզիպտոսի ո և է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

Le Gérant Dr A. S. HAGOPIAN

ԳԲԻԳՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ

Պագար Մուրուր Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը Շարա Միւզէլինէն փոխադրած է ի Պագար Մուրուր Յրանաական նորաձեւութեանց յար և նրման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած հմտութեամբ մինչև ցարդ գոհ ըրած է իրեն դիմող Պատ. յաճախորդներն:

Իւր գործածած ապրանքներու տոկունութիւնն երբէք տարակոյս չ'վերցնելու:

Իրեն եղած յանձնարարութիւնք ո'չ միայն չափաւոր գներով, այլ և փութով և մեծ խնամով կը պատրաստուին:

Գիմեցէք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնել և կոշտերէ (նասրը) ազատ մնալ: 21-24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (բասալը) սև, շագանակագոյն և ոսկեգոյն: Սև ներկ շիշով վայրկեանապէս սեւցնող: Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադարեցնէ և մաշերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ) գլուխները մաշ կը բերէ: 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած և հիանալի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 զըռոյլ (2 Ֆրանք):

Ճերմկցնող շար շիշով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եզիպտոսի մէջ միակը:

Ակուայի փոշի և շուր. մին մաքուր և ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող և ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մաշերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ և օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք և կը փոխանակենք բոլոր ազգաց գործածած նամակադրոշմները: 3 6-8